

Պատվաստումները (ներարկումները) Առողջ պահեք Ձեր երեխային



Ի՞նչ են պատվաստումները

Պատվաստումներն օգնում են Ձեր նորածնին կամ մանկանը չհիվանդանալ: Պատվաստումների մեծ մասը կատարվում է ներարկումով, սակայն որոշ պատվաստումներ, օրինակ՝ ռոտավիրուսը, ընդունվում է խմելու միջոցով: Դրանց աշխատանքը կայանում է նրանում, որ օգնում են օրգանիզմին պայքարել վիրուսների դեմ: Մեծ մասամբ ներարկումները կանխում են լուրջ հիվանդությունների առաջացումը երեխայի մոտ: Եթե երեխան, այնուամենայնիվ, հիվանդանա, ապա, ամենայն հավանականությամբ, հիվանդությունն ավելի մեղմ կընթանա:

Ե՞րբ պետք է իմ երեխան ներարկվի

Կարևոր է, որ երեխան ճիշտ ժամանակին ներարկվի: Այդ է պատճառը, որ երեխան պետք է ընթացիկ ստուգումներ անցնի բժշկի մոտ: Հետևեք Ձեր բժշկի կազմած ստուգումների գրաֆիկին: Ձեզ հետ բերեք Ձեր պատվաստումների ցուցակը (դեղին քարտը):

Ներարկումներն անվտանգ են

Այո: Ամեն տարի բազմաթիվ երեխաներ են ներարկում ստանում: Մինչև որևէ պատվաստանյութի (պատվաստումի) արտոնումը կամ օգտագործումը՝ այն տարիներ շարունակ փորձարկվում է: Երբեմն ներարկումները կարող են մեղմ կողմնակի ազդեցություններ առաջացնել: Դրանցից ամենատարածվածները ցավը կամ կարմելն է ներարկման վայրում: Երբեմն կարող է թեթև ջերմություն առաջանալ: Հազվադեպ են պատահում դրանից ավելի լուրջ կողմնակի ազդեցություններ: Եթե ներարկումից հետո Ձեր երեխայի ինքնազգացողությունը Ձեզ մտահոգում է, զանգահարեք Ձեր բժշկին:

Ներարկումներն աուտիզմ առաջացնում են

Ոչ: Աուտիզմը զարգացման խանգարում է: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ներարկումներն աուտիզմ չեն առաջացնում: Աուտիզմի դեպքերը նույն հաճախականությունն ունեն ներարկում ստացած և չստացած երեխաների մոտ: Ոմանք կարծում են, թե կապ կա թիոմերսալի (որոշ պատվաստանյութերում օգտագործվող՝ սնդիկի հիմքի վրա ստեղծված խտանյութի) և աուտիզմի միջև: Չնայած դա երբեք չի հաստատվել, թիոմերսալը հեռացվել է Միացյալ Նահանգներում սովորաբար օգտագործվող բոլոր մանկական պատվաստանյութերից: